ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017 թվականի թիվ 148-Լ որոշմամբ հաստատված «Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի» **(այսուհետ նաև՝ Ծրագիր)** 7-ից 11 կետերի պահանջներով,

Հիմք ընդունելով Փաստաբանների պալատում երիտասարդ փաստաբանների անվճար օգտագործմանը հատկացված աշխատասենյակից **(այսուհետ նաև՝ Աշխատասենյակ)** օգտվելու հայտերի ընդունման և քննարկման ժամանակահատվածը սահմանելու, ինչպես նաև հարակից հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունը,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. 2023 թվականի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում Աշխատասենյակից օգտվելու համար ընդունել հայտեր՝ 2023 թվականի հունիսի 27-ից մինչև 2023 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

2. Սահմանել, որ՝

2.1) Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) info@advocates.am կամ youthboard@advocates.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև առձեռն՝ ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում, հայտերի ընդունման ժամանակահատվածում ներառված յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-

26 հունիսի 2023թ.
թիվ 2-Լ
ք. Երևան

ից մինչև 17:00-ն:

2.2) Հարցազրույցն անցկացվելու է ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում կամ առցանց՝ 2023 թվականի հուլիսի 03-ին, ժամը 15:00-ից սկսած՝ հավակնորդների հետ նախապես համաձայնեցված ժամին և եղանակով:

2.3) Փոստով ուղարկված հայտերն ընդունված չեն համարվի, եթե հասցեատերը փոստային առաքանին փաստացի ստանա 2023 թվականի հունիսի 30-ից հետո:

3. Հաստատել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ Փաստաբանների պալատի
Երիտասարդական խորհրդի
նախագահ՝ Միքայել Դանիելյան

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական
խորհրդի 26.06.2023թ. թիվ 2-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատին
_____ից
(անուն, ազգանուն, հայրանուն)
արտոնագրի № _____տրված՝_____ թ.
հասցե՝ _____
էլեկտրոնային փոստի հասցե՝_____
հեռախոս՝ _____

«____» հունիս 2023թ.

ՀԱՅՏ

Սույնով հայտնում եմ, որ ցանկանում եմ օգտվել Աշխատասենյակից:

Մասնագիտական ուղղվածությունը՝ _____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

Նախկին աշխատանքային գործունեության մասին տեղեկատվություն՝
_____
(նշել ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական աշխատանքային գործունեության մասին)

Գիտական և/կամ մանկավարժական բնագավառում աշխատանքային գործունեություն իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն[1]՝ _____
_____

Հայտնում եմ, որ՝

- չունեմ աշխատասենյակ և նախորդ կետից բացի որևէ այլ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չեմ գտնվում,
- ծանոթացել եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրին և համաձայն եմ այդ ծրագրով սահմանված դրույթների հետ,
- համաձայն եմ անվճար իրավաբանական օգնություն տրամադրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով սահմանված նվազագույն քանակով:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

[1] Նշվում է գործատու(ներ)ի վերաբերյալ տեղեկություն, մասնավորապես՝ գործատու(ներ)ի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), աշխատաժամանակի տևողությունը